



«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»


ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«15» մայիսի 2015թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

 Հ. Թունյան

ԳԲԽ-10/15 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի 28.04.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 28.04.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 2014թ. ֆինանսական

հաշվետվությունների աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով 2015թ. մարտի 27-ին հայտարարել է «ՊԸԾԶԲ-ՀՎԿԱԿ-2015-02» ծածկագրով պարզեցված ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցել են երկու աուդիտորական ընկերություններ՝ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն և «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն: Գնման ընթացակարգի մասնակից «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի գնային առաջարկն է՝ 888 000 (ութ հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ, իսկ «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի գնային առաջարկն է՝ 2 142 000 (երկու միլիոն հարյուր քառասուներկու հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Ընկերությունը հայտնել է, որ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 2015թ. ապրիլի 20-ի թիվ 3 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը հաղթող է ճանաչել «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ին, որն առաջարկել է մոտ 2.5 անգամ ավելի բարձր գին՝ նշված ծածկագրով ծառայությունների համար:

Ընթացակարգի հրավերի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված աուդիտորական կազմակերպություններին և աշխատակազմին առաջադրվել է հետևյալ որակավորման պահանջները՝

1. «Մասնագիտական փորձառություն» չափանիշով նշված է, որ նմանատիպ են համարվում ստացիոնար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում իրականացված աուդիտորական ծառայությունները:

2. «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշով նշված է, որ աուդիտ իրականացնող մասնակիցը պետք է ներկայացնի առնվազն թվով 4 աշխատանքային ռեսուրսներ, ովքեր պետք է ունենան առնվազն 1 անձ՝ ACCA F9 աստիճանի որակավորում ունեցող մասնագետ, ACCA DIP IFR որակավորում ունեցող մասնագետ, աուդիտի խմբի ղեկավար, աուդիտորի օգնական-իրավաբան (իրավախորհրդատու): Ընդ որում, նշված անձինք պետք է ունենան ոչ պակաս, քան առաջին և երկրորդ նշվածների դեպքում՝ 2 տարվա նմանատիպ աշխատանքային փորձառություն, երրորդ և չորրորդ նշվածների դեպքում՝ 5 տարվա նմանատիպ աշխատանքային փորձառություն:

«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն հայտնել է, որ աուդիտորական ծառայությունների մատուցումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված աուդիտորական ծառայությունների մատուցման

լիցենզիայի հիման վրա, որը հնարավորություն է տալիս աուդիտորական աշխատանքներ իրականացնել (աուդիտորական ծառայություններ մատուցել) Հայաստանի Հանրապետության ողջ տարածքով և բոլոր ոլորտներով՝ այդ թվում նաև առողջապահական ոլորտում՝ ներառյալ ստացիոնար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում, սակայն գնահատող հանձնաժողովի 20.04.2015թ. թիվ 3 արձանագրությամբ հաղթող է ճանաչվել «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը նշել է, որ վերոգրյալ սահմանափակումները անհիմն կերպով բարդացնում են գնման ընթացակարգին մասնակցելու հնարավորությունը և սահմանափակում մրցակցությունը, ինչն արգելված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն:

«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն գտնում է, որ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի և ՀՀ կառավարության N 168-Ն որոշման (ընդունված՝ 10.02.2011թ.) 85-րդ կետով սահմանված պահանջները (ներկայումս՝ 30.01.2015թ. ընդունված ՀՀ կառավարության N 105-Ն որոշման 69-րդ կետով սահմանված պահանջները):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդը բողոքի քննարկման արդյունքներով իրավունք ունի կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ, ինչպես նաև դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ:

Ելնելով վերոգրյալից՝ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն խնդրել է կասեցնել «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի և «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև պայմանագրի կնքման գործընթացը, ինչպես նաև չեղյալ համարել «ՊԸԾՁԲ-ՀՎԿԱԿ-2015-02» ծածկագրով հայտարարված ընթացակարգով գնահատող հանձնաժողովի 2015թ. ապրիլի 20-ի թիվ 3

արձանագրությամբ «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշումը:

«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն 13.05.2015թ. գրությամբ ներկայացրել է 06.05.2015թ. ժամը 17:00-ին կայացած նիստի ժամանակ ԳԲԽ-10/15 բողոքը քննող հանձնաժողովի կողմից պահանջված փաստաթղթերը, մասնավորապես, Ընկերությունը ներկայացրել է «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի և «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ի միջև 2014թ. մարտի 21-ին կնքված թիվ AM-AS-14-009 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 14-009/1 լրացուցիչ համաձայնագիրը, Ընկերության կողմից 2014թ. հունիսի 25-ին «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ին կատարած հարցման և 2014թ. հունիսի 27-ին ստացված հարցման պատասխանը:

2. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Ընկերության 28.04.2015թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը 06.05.2015թ. թիվ 01/08.2/9483-15 գրությամբ հայտնել է, որ «ՊԸԾՁԲ-ՀՎԿԱԿ-2015-02» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի հրավերով սահմանված է եղել պահանջ, որ մասնակիցը ներկայացնի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած գնման առարկա հանդիսացող կամ համանման /նմանատիպ/ ծառայությունների կատարման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր: «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում որպես նախկինում կատարված պայմանագիր ներկայացվել է «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը, որի կատարման վերջնաժամկետը սահմանված է եղել 2014թ. ապրիլի 18-ը, սակայն աուդիտորական ծառայության հանձնման-ընդունման ակտը ստորագրվել է 2014թ. հունիսի 23-ին և վերոգրյալից պարզ է դառնում, որ պայմանագիրը չի կարելի համարել պատշաճ կատարված:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ գնման ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ նմանատիպ են համարվում ստացիոնար բժշկական օգնություն և սպասարկում

իրականացնող կազմակերպություններում իրականացված աուդիտորական ծառայությունները, սակայն Ընկերության կողմից նմանատիպ պայմանագիր չի ներկայացվել:

Հրավերով սահմանված աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջներ են եղել 1 անձ՝ ACCA F9 աստիճանի որակավորում ունեցող մասնագետ, ACCA DIP IFR որակավորում ունեցող մասնագետ, աուդիտի խմբի ղեկավար, աուդիտորի օգնական-իրավաբան (իրավախորհրդատու): Ընկերության կողմից ներկայացվել է Ալբերտ Ասատրյանի ՀՀ ՖՆ Աուդիտորի որակավորման վկայական, Լիլիթ Մայիլյանի ՀՀ ՖՆ Աուդիտորի որակավորման վկայական, Ռոզա Մանուչարյանի ՀՀ ՖՆ Աուդիտորի որակավորման վկայական և ACCA անդամակցության վկայական և Սյուզաննա Գևորգյանի ՀՀ Փաստաբանների պալատի կողմից տրված փաստաբանական գործունեության անդորագիր:

Պատվիրատուն գտնում է, որ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում «ՊԸԾՁԲ-ՀՎԿԱԿ-2015-02» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի երեք պահանջներին, որի արդյունքում վերջինիս հայտը մերժվել է:

Պատվիրատուն նաև առաջարկել է «ՊԸԾՁԲ-ՀՎԿԱԿ-2015-02» ծածկագրով հայտարարված ընթացակարգը համարել չկայացած՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պատվիրատուն պարտավորվում է օրենքի 24-րդ հոդվածով սահմանված ժամկետներում հրապարակել տարեկան հաշվետվությունը, իսկ բողոքարկման նիստի տևողությունը կարող է հանգեցնել նշված ժամկետների խախտմանը:

3. ԳԲԽ-10/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-10/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2014թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով 2015թ. մարտի 27-ին հայտարարվել է «ՊԸԾՁԲ-ՀՎԿԱԿ-2015-02» ծածկագրով պարզեցված ընթացակարգ:

2. Հրավերի 1-ին մասի 2.3 կետով սահմանվել են հետևյալ պահանջները.

Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

- մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը,

- աշխատանքային ռեսուրսներ:

«Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարված պայմանագրերի առարկան, ծավալը՝ գումարային արտահայտությամբ (<< դրամ), պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները:

Մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն (հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման/նմանատիպ աշխատանքների կատարման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր: **Նմանատիպ են համարվում ստացիոնար բժշկական օգնության և սպասարկում իրականացնող կազմակերպություններում իրականացված աուդիտորական ծառայությունները:**

«Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.4) պայմանագրի կատարման համար նույն հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսների առկայության մասին՝ կցելով պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները:

Ընդ որում, աշխատանքային ռեսուրսներին առկայությունը հիմնավորելու համար մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

2) մասնակցի որակավորումն այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն մասով նախատեսված պահանջները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջներն են. 1 անձ՝ ACCA F9 աստիճանի որակավորում ունեցող մասնագետ, ACCA DIP IFR որակավորում ունեցող մասնագետ, աուդիտի խմբի ղեկավար, աուդիտորի օգնական-իրավաբան (իրավախորհրդատու): Նշված անձինք պետք է ունենան ոչ պակաս, քան առաջին և երկրորդ նշվածների դեպքում՝ 2 տարվա նմանատիպ աշխատանքային փորձառություն, երրորդ և չորրորդ նշվածների դեպքում՝ 5 տարվա նմանատիպ աշխատանքային փորձառություն:

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում մասնակցի հայտը մերժվում է»:

3. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2014թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԸԾՁԲ-ՀՎԿԱԿ-2015-02» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել երկու աուդիտորական ընկերություններ՝ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» և «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.04.2015թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են հավելված 3.1 կետով նշված մասնագիտական գործունեության համապատասխանությունը հավաստող պատշաճ ձևով իրականացված պայմանագրի և 3.4 կետով սահմանված որակավորումը հավաստող փաստաթուղթը, ուստի հանձնաժողովը որոշում է կայացրել «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի գնային առաջարկը չքննարկել՝ գնման հայտով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.04.2015թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.1 ենթակետով որոշում է կայացրել «ՊԸԾՁԲ-ՀՎԿԱԿ-2015-02» ծածկագրով պարզեցված ընթացակարգով հաղթող ճանաչել «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ին:

4. ԳԲԽ-10/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի 28.04.2015թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 06.05.2015թ. թիվ 01/08.2/9483-15 գրությունը, «ՊԸԾՁԲ-ՀՎԿԱԿ-2015-02» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր) և «ՊԸԾՁԲ-ՀՎԿԱԿ-2015-02» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.04.2015թ. թիվ 3 արձանագրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտը վավեր է մինչև նույն օրենքին համապատասխան պայմանագրի (շրջանակային համաձայնագրի) կնքումը, մասնակցի կողմից հայտը հետ վերցնելը, հայտի մերժումը կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.04.2015թ. թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով որոշում է կայացրել **չքննարկել** «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը հավելված 3.1 կետով նշված մասնագիտական գործունեության համապատասխանությունը հավաստող պատշաճ ձևով իրականացված պայմանագրի և 3.4 կետով սահմանված որակավորումը հավաստող փաստաթղթի բացակայության պատճառով:

Օրենքով նախատեսված չէ մասնակիցների ներկայացրած հայտերը չքննարկելու մասին որոշում կայացնելու գնահատող հանձնաժողովի իրավասություն, ինչից հետևում է, որ գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով՝

Ընթացակարգի երկու մասնակիցներից մեկի՝ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի ներկայացրած նվազագույն գնային առաջարկը չքննարկելու պայմաններում, ընթացակարգի երկրորդ մասնակցին՝ «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ին թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.1 ենթակետով հաղթող ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Օրենքի պահանջներին և ենթակա է դադարեցման:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

- գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.
- պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ, այսուհետ նաև՝ Կարգ) 30-րդ կետի 1-ին ենթակետի «բ» կետի 2-րդ պարբերության համաձայն՝ եթե պատասխանատու ստորաբաժանում սահմանելու ակտով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնումների պլանը հաստատվելու օրվան հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը հաստատում է գնման հայտը, որը ներառում է շինարարական աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը: Աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին (տարիների նվազագույն քանակ, գործունեության ոլորտը և

կատարած աշխատանքը) ներկայացվող պահանջները սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

Կարգի 85-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախատրակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

Վերոնշյալ իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ Հրավերի 1-ին մասի 2.3 կետով աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները («1 անձ՝ ACCA F9 աստիճանի որակավորում ունեցող մասնագետ, ACCA DIP IFR որակավորում ունեցող մասնագետ, աուդիտի խմբի ղեկավար, աուդիտորի օգնական-իրավաբան (իրավախորհրդատու): Նշված անձինք պետք է ունենան ոչ պակաս քան, առաջին և երկրորդ նշվածների դեպքում՝ 2 տարվա նմանատիպ աշխատանքային փորձառություն, երրորդ և չորրորդ նշվածների դեպքում՝ 5 տարվա նմանատիպ աշխատանքային փորձառություն») հակասում են Կարգի 30-րդ կետի 1-ին ենթակետի «բ» կետի 2-րդ պարբերությամբ սահմանված պահանջներին, քանի որ նշված պարբերության համաձայն՝ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշին վերաբերող վերոհիշյալ պահանջները սահմանվում է միայն շինարարական աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում: Վերոհիշյալը իր հերթին հանգեցրել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետերի խախտմանը:

Գտնում ենք, որ Պատվիրատուն խախտել է նաև Կարգի 85-րդ կետով սահմանված պահանջները՝ Հրավերի 1-ին մասի 2.3 կետով սահմանելով, որ ֆինանսատնտեսական գործունեության աուդիտորական ծառայության համար նմանատիպ են համարվում միայն ստացիոնար բժշկական օգնության և սպասարկում իրականացնող կազմակերպություններում իրականացված աուդիտորական ծառայությունների մատուցումը, քանի որ Կարգի վկայակոչված կետի բովանդակությունից հետևում է, որ գործարքները

համանման են համարվում, եթե դրանք դասվում են համանման համարվող միևնույն տնտեսական գործունեության խմբին: Վերոհիշյալը իր հերթին հանգեցրել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետերի խախտմանը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի 28.04.2015թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ դադարեցնել «ՊԸԾՁԲ-ՀՎԿԱԿ-2015-02» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. ապրիլի 20-ի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.1 ենթակետով «Էլվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝



Հ.Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-10/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ռ.Մկրտչյան